# Թեման՝ **«Մեդիագրագիտությունը՝ հասարակագիտության դասաժամերին»**



Դասընթացավար՝ Նվարդ Առաքելյան
Լոռու մարզի ք. Վանաձորի թիվ 28 հիմն. դպրոցի ուսուցչուհի

Դասի թեման՝ «Ընտրություններ։ Մեդիագրագիտության կարևորությունը՝ ընտրական գործընթացում»

**9-րդ դասարան**



# ՆՊԱՏԱԿ

- Ձևավորել «ընտրական գործընթաց» հասկացությունն բացատրելու հմտություն,

- Զարգացնել ընտրական գործընթացի բոլոր փուլերում մեդիագրագիտության դերն ու նշանակությունը կարևորելու, մեդիագործիքների տեսակները տարբերակելու և բնութագրելու կարողություն,



- Ձևավորել մեդիագրագետ քաղաքացի (ընտրող, թեկնածու, դիտորդ, վստահված անձ, ընտրական հանձնաժողովի անդամ, լրագրող)

# ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ

- Համացանցից և ՀՀ ընտրական օրենսգրքից գտնի, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ,
- Բնութագրի ընտրական գործընթացի բոլոր փուլերը՝ կարևորելով մեդիագրագիտության դերն ու նշանակությունը
- Հիմնավորի և արժևորի մեդիագրագիտության դերն ընտրական գործընթացում։

Հ 29, Հ 30, Հ 31, Հ 40, Հ 41, Հ 46

**Միջառարկայական կապեր՝** հայոց լեզու, մաթեմատիկա, ինֆորմատիկա։

**Խաչվող հասկացություններ՝** ընտրություն, քվեարկություն, գաղտնի, հաշվարկ, մեդիա։

**Կարողունակություններ՝** լեզվական, ինքնաճանաչողական և քաղաքացիական, թվային մեդիա, սովորել սովորելու։



# ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ



- **Քայլ 1. Տնային աշխատանքի ստուգում ( րոպե)**

Դասարանը նախապես բաժանվել է 3 խմբի, խմբերին տրվել են առաջադրանքներ՝ կազմելու նախընտրական խմբեր, ունենալ թեկնածու, պատրաստել պաստառներ և բուկլետներ, յուրաքանչյուր թիմակցի համար սահմանել լիազորությունների և պարտականությունների որոշակի շրջանակ։



## Քայլ 2. Խմբային աշխատանքի ներկայացում՝ անդրադառնալով մեդիագրագիտությանը

Խմբերից յուրաքանչյուրը 3 րոպեի ընթացքում ներկայացնում է, թե որպես մեդիագրագետ քաղաքացի՝ որ կայքերից է օգտվել ՀՀ ընտրական օրենսգրքի հոդվածները որոնելիս և ինչու:

Այնուհետև յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր թեկնածուին:



# Քայլ 3. Նախընտրական քարոզարշավի անցկացում

Յուրաքանչյուր խումբ, համաձայն նախապես կատարված դերաբաշխման, սկսում է նախընտրական քարոզարշավը՝ էլեկտորատին հիշեցնելով մեդիագրագիտության դերի մասին:

Պնդում...
Օժանդակում...





## Քայլ 4. Ընտրություններ

Այս փուլում տեղի է ունենում փակ գաղտնի քվեարկություն՝ հիշեցնելով, որ մեդիագրագետ չլինելով՝ քաղաքացին կարող է դառնալ խաբեության զոհ կամ իր քվեարկած քվեաթերթիկը հրապարակել համացանցում, ինչն արգելվում է։



## Քայլ 5. Ամփոփում/ Ելքի քարտ

Սովորողները գրում են մեկ պնդում և օժանդակում  այդ պնդմանը

**Ելքի քարտ**

**Պնդում…**
**Օժանդակում…**

## Տնային հանձնարարություն

ՀՀ ընտրողների ռեգիստրից գտնելու իրենց ընտանիքի չափահաս անդամների տվյալները։

# Օգտագործված գրականություն

- Ա. Գյուլբուդաղյան, Կ. Հարությունյան, Տ. Թովմասյան - «Հասարակագիտություն» (8-րդ դասարանի դասագիրք),
- Ա. Գյուլբուդաղյան, Կ. Հարությունյան, Տ. Թովմասյան - «Հասարակագիտություն» (9-րդ դասարանի դասագիրք),
- ՀՀ Սահմանադրություն,
- ՀՀ ընտրական օրենսգիրք,
- ՀՀ ԿԸՀ պաշտոնական կայք (https://www.elections.am ):






- Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը` որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում: